ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՄԱՎՈՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՔԵՀՅԱՆԻ
(1887—1958)

Օգոստոսի 10-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, Տուապսե քաղաքում ի Տեր հանգյավ արժանապատիվ Տ. Շմավոն ավագ քահանա Կարաքեհյանը։

Հանգուցյալը ծնվել էր Կուբանի (Կրասնոդարի երկրամաս) Խոյթա գյուղում 1887 թվականին, Թուրքիայից գաղթած գյուղացու ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել էր տեղի ծխական դպրոցում և ապա վերջացրել Տուապսեի քաղաքային դպրոցը։ Որոշ ժամանակ իրենց գյուղի ծխական դրպրոցում ուսուցչություն անելուց հետո, 1913 թվականին Պարտիզակում (Նիկոմիդիա) հանրածանոթ Տ. Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանից ձեռնադրվում է քահանա։

Այդ օրվանից սկսած անխոնջ հովվի առաջ գործունեության լայն ասպարեզ է բացվում։ Սկզբում նա քահանայագործում է Տուապսեի և Աբխազիայի հայաբնակ շրջաններում, ապա Գագրի, Պելինկովո, Կավալևսկայա և Շաֆրոնովո գյուղերում։ 1936 թվականին նա տեղափոխվում է Սուխումի և սկսում հովվել տեղի հայությունը մինչև իր մահը։

Այս տարի լրացավ նրա քահանայության 45 տարին։ Նա միշտ էլ սիրված է եղել իր սիրելի հավատացյալ հոտից և գնահատվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից։

Ի տրիտուր իր երկարամյա բարվոք ու նվիրված աշխատանքի, նա արժանացել է ծաղկյա փիլոնի և քահանայական լանջախաչի՝ երջանկահիշատակ Տ. Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի կողմից, իսկ 1948 թվականին երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի կողմից ստացել է ավագ քահանայության պատիվ։

Հանգուցյալը մինչև իր մահը անխոնջ կերպով աշխատում էր և օգտակար էր հանդիսանում իր հոտին և Հայ Եկեղեցուն՝ Սուխումի շրջանի ամենահեռավոր գյուղերն անգամ հասցնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձայնը և «Էջմիածին» ամսագիրը։ Նա սիրված էր իր հոտից ըստ ամենայնի և իր մահկանացուն կնքեց իր պարտքը կատարած իր ժողովրդի և Մայրենի Եկեղեցու հանդեպ։

Անձնվեր հովվի օծման և թաղման արարողությունները ըստ արժանվույն կատարելու համար, վրահայոց թեմի առաջնորդ դերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի կարգադրությամբ, Տուապսե էին մեկնել թեմի քահանաներից Տ. Միքայել ավագ քահանա Սամվելյանը և Զարեհ քահանա Բասմաջյանը։

Հանգուցյալը թաղվեց Կրասնոդարի մարզի Խոյթա գյուղում, իր իսկ ծննդավայրում, իր պապերի կողքին։

Հավիտենական հանգի՛ստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՒՍԻԿ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶՈՅԱՆԻ
(1876—1958)

Սեպտեմբերի 8-ին Ախալցիխեում վախճանվեց արժանապատիվ Տ. Հուսիկ քահանա Միրզոյանը, երկարատև և ծանր հիվանդությունից հետո։

Հանգուցյալը ծնվել է 1876 թվականին Վանի շրջանի Կենդանյաց գյուղում և իր կրթությունն ստացել նախ իր ծննդավայրում և ապա Վարագա Ս. Նշան վանքում։

1902 թվականին Վանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում քահանա է ձեռնադրվել իր գյուղի վրա և պաշտոնավարել է մինչև 1917 թվականը։

1920—1922 թվականներին քահանայագործել է Լենինականում և ապա Ախալցիխեում՝ մինչև իր մահը։

Հանգուցյալը իր հոտից սիրված և հարգված հովիվ է եղել և նվիրումով ծառայել իր ժողովրդին և եկեղեցուն։

Հավիտենական հանգի՛ստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։